

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

06. 06. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Ն. Ասրյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերդյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ.Դոխոյանը, Հ. Մկրտչյանը, Ն. Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ
- Ա. Սարգսյանը , Տ. Էվինյանը - մարզպետի օգնականներ
- Ա. Չատինյանը - ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Մայիսի 30-ից հունիսի 2-ը Շվեդիա կատարած այցի մասին
/ Ա.Նալբանդյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին
/ Ջեկ. Ն.Սարգսյան/
3. Սեփական եկամուտների մասին
/Ջեկ.Ն.Ասրյան/
4. ա/,,ՀՀ Կառավարության 2015թ. դեկտեմբերի 24-ի թիվ 153-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ,,որոշման իրազեկում
բ/ Սպիտակի հոգեկան առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիների խնամքի կենտրոնի աշխատանքների սկզբի մասին
/Ջեկ.Ս.Լամբարյան/
- 5.,,Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» ընկերությունների սպասարկման տարածքում գտնվող` համայնքային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը նվիրատվության կարգով ջրամատակարար ընկերություններին փոխանցելու մասին
/Ջեկ.Ա.Օհանյան/
- 6.Ամառային զորակոչի կազմակերպչական աշխատանքների մասին
/Ջեկ.Ս.Ղուբաթյան/
7. Հունիսի 2-ին կայացած մրցույթի արդյունքի մասին
/Ջեկ.Ա.Աղլոյան/

8. ՀՀ կառավարության,, 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշման 36-րդ կետով նախատեսված ,, ՀՀ 2016-2025թ.թ. Տարածքային զարգացման ուղղակարությանը հավանություն տալու մասին,, արձանագրային որոշման նախագծի մասին

/Զեկ. Հ.Մկրտչյան/

9. Գարնանացանի աշխատանքների եվ մարզում ագոտական պարարտանյութի բաշխման մասին

/ Զեկ. Գ.Հակոբյան/

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝
1-ամսյա ժամկետում ներկայացնել ստորաբաժանումների գործառույթների համառոտ նկարագիրը՝ այդ նպատակով օգտագործելով սլայդներ:

2. ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական Լ. Ասլանյանին, Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

ա/ Վանաձորի քաղաքապետի հետ քննարկել Վանաձոր և ՌԻփսալա քաղաքների համագործակցության հարցը և ներկայացնել առաջարկություններ:

բ/ Անհրաժեշտ քննարկումներ կազմակերպել, այդ թվում՝ բիզնես ոլորտի ներկայացուցիչների հետ և ներկայացնել առաջարկություններ Չինաստանի Շանսի նահանգի պատվիրակության ս/թ հուլիսին նախատեսված այցի ընթացքում քննարկելու նպատակով:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

„ՀՀ Կառավարության 2015թ. դեկտեմբերի 24-ի թիվ 153-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ,,որոշման և Սպիտակի հոգեկան առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիների խնամքի կենտրոնի աշխատանքների սկզբի մասին անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացնել զանգվածային լրատվամիջոցներով:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Կատարել ուսումնասիրություններ մարզի Ճոճկան, Շնող և Մեծ Այրում համայնքներում տեղացած կարկուտի պատճառած վնասների վերաբերյալ և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ:

/Ժամկետ՝ 5 օր /

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/